# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2021 թվականի մայիսի 5-ից 9-ը Բուլղարիայի Հանրապետություն (Սոֆիա) գործուղման արդյունքների մասին

### 1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Կարեն Գիլոյան

### 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

### 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Բուլղարիայի Հանրապետություն (Սոֆիա), 2021 թվականի մայիսի 5-ից 9-ը

### 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Բուլղարիայի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Վալենտին Ռայչև

### 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սոֆիայում կայանալիք օլիմպիական խաղերի համաշխարհային վարկանիշային մրցաշարին ներկա գտնվելու նպատակով:

### 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Օլիմպիական խաղերի վերաբերյալ հարցեր:

### 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը հանդիպումներ է ունեցել Ըմբշամարտի համաշխարհային միության նախագահ(UWW)

Նենադ Լալովիչի, փոխնախագահ Միխայիլ Մամիաշվիլիի և մրցավարական հանձնաժողովի նախագահ(UWW) Անտոնիո Սիլվեստրի հետ : Նա մրցավայրից հետևել է հայ ըմբիշների ելույթներին:

Հունահռոմեական ըմբշամարտի Հայաստանի հավաքականի ներկայացուցիչներ Արմեն Մելիքյանը (60 կգ) և Կարեն Ասլանյանը (67 կգ) նվաճեցին Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կայանալիք 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի ուղեգիր:

## 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Առերես հանդիպումների ընթացքում քննարկվել է «Տոկիո 2020» օլիմպիական խաղերին ըմբշամարտի հայ մրցավարի մասնակցության հարցը: Նախնական համաձայնությամբ ըմբշամարտի մրցավար Ավետիք Վարդանյանը Տոկիոյում կսպասարկի օլիմպիական գոտեմարտերը: Նախնական համաձայնությամբ վերոնշյալ անձինք աշնանը պաշտոնական այց կկատարեն Հայաստան:

## 9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

11.05.2021թ.